ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՖԻԶՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկամաթեմատիկական տնտեսագիտության
ֆակուլտետի որակի պատասխանատու՝ Սահակյան Անի

ԳՅՈՒՄՐԻ 2016թ.

2015-2016 թ ուս. տարվա I կիսամյակում Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի Որակի ապահովման կենտրոնն իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

1. ԳՊՄԻ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցման կազմակերպում և անցկացում
2. ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցման իրականացում և վերլուծություն
3. Ուսանողներին անհատական և կուրսային աշխատանքի թեմաների տրամադրման վերաբերյալ հարցման իրականացում և վերլուծություն
4. ԳՊՄԻ ենթակառուցվածքային հավատագրման ժամանակացույցին համապատասխան գործընթացների կազմակերպում և իրականացում

1)ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցման կազմակերպում և անցկացում

ԳՊՄԻ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցման կազմակերպման համար ֆակուլտետից ճշգրտվել է ուսանողների թվաքանակը՝ ըստ կուրսերի: Հարցումն իրականացվել է ժամանակացույցին համապատասխան և այնուհետև հարցաթերթիկները տրվել են որակի ապահովման կենտրոն: Հարցման արդյունքները վերլուծվել են յուրաքանչյուր ամբիոնի որակի ապահովման պատասխանատուների կողմից:

2)ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցման իրականացում

ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցման նպատակն է բացահայտել մանկավարժական պրակտիկայի իրականացման արդյունավետությունը, հարցման մասնակցել են մանկավարժական պրակտիկա անցած ուսանողները:

Ներկայացնենք ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցման արդյունքները՝ ըստ հարցերի:

17 հարցված ուսանողներից 16 գոհ են մանկավարժական պրակտիկայի տևողությունից: Պրակտիկայի ընթացքում առավել դժվարություն է առաջացրել արտադասարանային միջոցառումների նախապատրաստումը և անցկացումը և օրագրերի լրացման, օրագրի կառուցվածքի հետ կապված խնդիրներ: Ուսանողների 88% -ից ավել գտնում են, որ անհրաժեշտ է պատրաստվածություն պրակտիկայի համար, իսկ որպես առավել լավագույն միջոց ընտրել են առարկայի դասավանդման մեթոդիկայի դասընթացում ներառել հատուկ գործնական ժամերը (լաբորատոր աշխատանքներ)՝ մանկավարժական պրակտիկայի մոդելավորման համար և մանկավարժության և հոգեբանության առարկաներից նախատեսված ուսումնական պրակտիկաների շրջանակների ընդլայնումը: Հարցվածների 71% գտնում են, որ իրենք հիմնականում դժվարություն են ունեցել արտադասարանային միջոցառումների անցկացման ժամանակ, 18%՝ պլան-կոնսպեկտների ձևավորման ժամանակ, 1% ՝ դասավանդվող առարկայի բովանդակության ուղղությամբ: Հիմնականում ուսանողները գոհ են իրենց պրակտիկայի ղեկավարներից և դպրոցի ղեկավարությանկողմից պրակտիկայի կազմակերպման գործընթացից: Ուսանողները գտնում են, որ մանկավարժական պրակտիկան նպաստում է մանկավարժական կարողությունների և հմտությունների զարգացմանը: Հարցվածները նշել են, որ մանկավարժական պրակտիկան ազդել է իրենց մասնագիտական ուղղվածության ձևավորման վրա, մասնավորապես հաստատել է իրենց մասնագիտական ճիշտ ընտրությունը, մանկավարժ դառնալու կարողությունը: Պրակտիկայի գնահատման մեթոդը ընտրելիս, ուսանողների 76% գտնում են, որ այն պետք է գնատահատվի երեք գործոնով՝ ուսուցիչ- մեթոդիստի գնահատականը, պրակտիկայի ղեկավար- մեթոդիստի գնահատականը և աշակերտների կարծիքը: Ինչպես նաև նշենք, որ ուսանողները բարձր են գնահատում ԳՊՄԻ պրակտիկայի բաժնի կազմակերպչական աշխատանքները:

3)Հեռակա բաժնի ուսանողներին անհատական և կուրսային աշխատանքի թեմաների տրամադրման վերաբերյալ հարցման իրականացում

Նոյեմբեր ամսին իրականացվել է հեռակա բաժնի ուսանողներին անհատական և կուրսային աշխատանքի թեմաների տրամադրման վերաբերյալ հարցումը, որի արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողներին ժամանակին տրամադրվել է անհատական և կուրսային աշխատանքի թեմաները:

4)ԳՊՄԻ ենթակառուցվածքային հավատագրման ժամանակացույցին համապատասխան գործընթացների կազմակերպում և իրականացում

Կազմակերպվել է՝

- ԳՊՄԻ ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրման ժամանակացույցի քննակում դեկանի և ամբիոնների վարիչների հետ
- Ֆակուլտետի աշխատակազմի հետ բուհի ենթակառուցվածքային հավատագրման հետ կապված հարցերի քննարկում
- Ֆակուլտետի աշխատակազմի և ամբիոններում առանձին բուհի ենթակառուցվածքային ինքնավերլուծության ուսումնասիրում և քննարկում
- Ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպումներ և բուհի ենթակառուցվածքային հավատագրման հետ կապված հարցերի քննարկում
- ԳՊՄԻ ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրման փորձագիտական կազմի այցի համար անհրաժեշտ պայմանների ապահովում
- Բուհի ենթակառուցվածքային հավատագրման փորձագետների այցը՝ համաձայն իրենց ժամանակացույցի և օրակարգի
- Բուհի ենթակառուցածքային հավատագրման փորձագիտական այցի նախնական զեկույցի քննարկում

Որակի ապահովման կենտրոնի տնօրեն՝ Ն. Ավետիսյան

Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի որակի ապահովման պատասխանատու՝
Ա. Սահակյան

26.02.2016